Ավետիք Իսահակյան

Ա՜խ, մի անգամ ոսկետերև աշունքին

Ա՜խ, մի անգամ ոսկետերև աշունքին
Անցնում էի ծայրամասով քաղաքի,
տեսա երեք դասաբներ՝
Խիճուտ ափին քաղցրամրմունջ գետակի,
Մորթում էին քսանի չափ գառնուկներ:
Երկու գառի գլուխն արդեն կտրած էր,
Իր արյան մեջ թփրտում էր մեկը դեռ,
Իսկ դասաբը ծխամորճը շրթունքին,
Չորրորդ գառին՝ աղիողորմ լացի մեջ՝
Գետնին սեղմել՝ սպանում էր եռանդով.
Մյուս գառները զարհուրանքից կարկամած՝
Նայում էին խոր ու անթարթ աչքերով
Մորթվող եղբորն ու դասաբի դանակին,
Եվ ողջ մարմնով դողում էին, սրսփում.
Բայց մանավանդ տոտիկները նրանց նուրբ
Դողո՜ւմ էին, դողո՜ւմ էին սաստկագին…

1939